

3301
3302
3303
3304
3305

Supple

Upper 9 m 2 m

96.

891.71
Q.-58

15
22.111
19
7847

1664

Судаков Н.А.

Фриман

134

✓
✓
✓

БЕРЕГИТЕ КНИГУ!

ОНА СЛУЖИТ НЕ ОДНОМУ, А МНОГИМ

- Возвращайте книгу в срок, чтобы и другие могли воспользоваться ею.

НН

2011

2003

ԹԱԻՍ ՆԱՐԵԳՈՅՆ ԳՐԱԴՆԵՐ

891.71

Գ. ԱՅՃՄԱՆԻ

ՀԱՆԳՈՅՑԻ ԼՈՒԾՈՒՄԸ

Քարդմ. Օլգա Գևորգեանի

Արտգատիպ «Հապերանօ»
Թիֆլիս 1910

ԴԱՎԻԴՈՎԻ ԺԱՅԱՐԴԻ



1727
41

թշունի գետարձ ով նույնի խրախիլ
այս ամայօթ ամպյօթ ըւայ պղղմածու
կոյմանց մէք ու սէք ուժուածու ու մէք
տայ բիշախան ազդախան ըժրասկար
և խռարհնոք պղղման ազդեցու մէք
արակի ու ազդյան պղղման ամբախինց
դիմու մէն պղղմանը և նաև մէն
և նորուաց Դ. Այզմանի պղղմածոցու
ազդախան ենարդ ենարդ ենարդ
անախան ու մէք մէք ու խոճ դեմքի

Առաւոտեան մատակարարողը բերում է
միս, կանաչեղէն, քարածուխ, հաց: Պո-
լինա կփոխան: Հորտարշտապ ընդունում
է և անմիջապէս կամքնում պղիտայի
առաջ: Թշունի գետարձ ու ամպյօթ
թշալով տապակում են կոտետները,
պղթպղթում է եփւող սուպը, զլթպղթում
է բօրը: Գոլորշիով, տաքոթիւնով, ծու-
խով, ձայներով, կաղնեայ տախտակի
վրա շտապ-շտապ ծեծող կոտորիչի թըխ-

թխկոցով լցնուում էր նեղուածք փոքրիկ խոհանոցը, բայց Պօլինա Լվովսան, նախկին ուսանողուհի, դէս ու դէն ընկնելով՝ կաթսայից թափային, թափայից պտուկին, չայնիկին, քամիչին, կամպօտով լի բանկային, սուխարիի արկդին... վառզելով լցնում է կերակուրները ափաէների մէջ, ածում է գաւաթների մէջ, տալիս է պօրցիաները, վրդովւում, շտապում է, կարմրած, գրգուած, լարւած, դժուարութեամբ լսելով և արդէն վատ հասկանաւով...

Ճաշողները սկսում են հաւաքւել ժամը 11-ի մօտ:

Մեծամասնութիւնը ուսանողներ են՝ բժշկական դպրոցի կամ բարձրագոյն հոգմոր դպրոցի աշակերտներ։ Նրանց ժամանակը քիչ է, նրանք շտապում են, պէտք է շտապէ և Պօլինա Լվովսան, որ պատրաստում է խոհանոցում, և նրա քը-

րոջ աղջիկ Նատաշան, որ սպասաւորում էր սեղանատանը։

Ժամը 2-ից յետոյ ճաշատունը դատարկւում է։ Ժամը 6-ի մօտ ժողովուրդը նորից սկսում է հաւաքւել, և նորից սկըսում է իրարանցում, որ տեսում է մինչև ժամը 9-ը։ Մինչև ժամը 9-ը՝ սեղանների միջով անցուղարձ է անում սպասաւորող Նատաշան և մինչև 9-ը նեղուածք խոհանոցում թշում են կօտեները թափաների մէջ, պլթպլթում է սուպը, զլթզլթում բօրշը, իսկ գոլորշին բարձրանում դէպի առաստաղը և տարածում այս ու այն կողմը, և նրա սպիտակ քուլաները նստում են պատերի վրայ։

Վերջանում է օրը, հաւաքում են ճաշարանը, մաքրում են, լուսանում և քերում։

Տանջւած ու փշրւած՝ պառկում է Պօլինա Լվովսան իր նեղ մահճակալի վրա,

պառկում է, բայց ականջին դեռ հնչում
են կոտեսների թշողը, սուպի զլթզլթո-
ցը, ճաշողների խօսակցութիւնները և
աղմուկները և կաղնեայ տախտակի վրա-
յից չը հանգչող կոտորիչների ձայնը:

Թուն չը կայ: Հանգստութիւն չը կայ:
Թեթևութիւն չէ գալիս:

Տասնութ տարի սրանից առաջ սկը-
սեց Պօլինա Լվովան կանգնել խոհանոցի
շուրջը, իր ճաշաբանում, և ահա այն ժա-
մանակւանից անփոփոխ և անդադար
կված է նրանից միենայնը, ամբողջովին
միենայնը՝ խոհանոցը, իրաբանցումը, կօ-
տլեաների թշողը, մուխը և գոլորշին,
տաքութիւնը, յոդածութիւնը, թախիծը,
զլխացաւը, գրամի պղութիւնը, ստորաց-
նող սակարկութիւնը՝ անհամբեր մատա-
կարարողների հետ, որոնց շատ էր պարտ,
ամօթիսած, ակնարկները յաճախորդներին,

որոնք իբան շատ էին պարտ...

Օրէցօր, շաբաթից-շաբաթ, տաբէ-ցտաշ-
րի գրա վերջը չէ տեսնեում, սահմանը
չէ նշմարում, և յայտնի էլ չէ, թէ ին-
չով պէտք է վերջանայ:

Բայց արդէն ջարդում է ինքը ֆի-
զիքապէս, ուժասպառ է հոգեպէս: Կըն-
ձինները զբոշմել են նրա երեսի վրա,
սպիտակ մազերը զիմի վրա աւելի են
շատացել քան թէ սեր և չորացել է
կուբծքը...

Այն, որ անցեալում կարելի էր լինում
անցկացնել թեթև, չարաձճի հեզնու-
թեամբ, այժմ անտանելիօրէն ճնշում է
նրան և սեղմում, և Պօլինա Լվովան
հանկանում է որ հանգստութիւն, գոնէ
ժամանակաւոր հանգստութիւն է հարկա-
ւոր անմիջապէս..

Բայց հանգստութիւն չը կայ, բոլորը
կատարում է առաջւայ պէս, նոյնա-
նման, և հանգստութիւն չի լինի...

Ճաշատան համար չը կայ ոչ կիրակի
և ոչ տօն օր, և Զատկի առաջին օրը, և
Զրոբնէքի, և Նոր-Տարւայ օրը պէտք է
ճաշ տալ: Եւ աարւայ 365 օրը կանգնած
է Պոլինա Լվովսան շիկացած պլիտայի շուր-
չը թշացող թավաների քով:

Այդպէս էր ճաշատան առաջին տար-
վայ գոյութեան ժամանակ, այդպէս կը
լինի նաև միշտ, քանի դեռ ճաշատունը
կը պահպանի իր գոյութիւնը:

Պոլինա Լվովսայի յանձախորդները հա-
մարեա բոլորը երիտասարդներ են: Յա-
ճախ նրանք գալիս են զոյերով: Նրանք
սիրահարւում են, ամուսնանում և ու-
սումն աւարտելուց յետոյ գնում տուն
իրանց հեռաւոր հայրենիքը:

Անցնում է ժամանակը:

Հետաքրքրութիւնից շարժւած կամ
ձանձրանալով հին բնակութիւնից, որտեղ

անց են կացրել լաւագոյն տարինները,
երբեմն էլ քէֆ անելու ցանկութեամբ,
նոյնպէս և իրանց գիտութեան պակա-
սորդը լրացնելու անհրաժեշտութեամբ,
Պոլինա Լվովսայի նախկին յաձախորդնե-
րը գալիս են նորից Պարիզ, բայց գալիս
են արդէն պատկառելի և ծանր մարդիկ
դարձած, սերտ կերպով կապւած արդիւ-
նաւէտ պաշտօնատեղերի հետ:

Այժմս նրանք ճաշում են մեծ բուլ-
վարների վրա գտնուող հարուստ հիւրա-
նոցներում և խմում են պօն-դէ-կանէ,
բայց որպէսզի յիշեն անցած-գնացածը,
երիտասարդութիւնը, ուսանողական կա-
նաչ սիրեցեալ օրերը՝ մէկ-մէկ գալիս են
և այստեղ, Պոլինա Լվովսայի էժանանոց
ճաշարանը...

Խոհանոցի գոլորշուց քրտնած փոք-
րիկ պատուհանից տեսնում է Պոլինա
Լվովսան հազւագիւտ հիւրին և մի րօպէ
դուրս է վաղում նրան ողջունելու: Ծա-

նօթանում է շքեղ հագնւած, գիրացած
ամուսնու և նրա երեխաների հետ և ապա
անհանդիսա, շտապ-շտապ յետ է վագում
դէպի պլիտան, թշացող թափաների մօտ,
որպէսզի տեսնէ, թէ չե՞ն այրւել արգեօք
տապակաները, կօլէտաները:

Պօլիսա Լվօլիսան այգավիսի շատ համե-
դիպումներ է ունիցել որոնց ժամանակ
շատ սիրտ շարժող յիշողութիւններ էին
ծագում նրա վշտացած հոգու մէջ: Մո-
ռացւած պատկերների ամբողջ շարքեր
էին ծագում անցկալից, վրդովում էին ու
ձնչում նրա հոգին...

Նրա յաճախորդներից մէկը յայտնի
բժիշկ է; նա պրիվատ-դօցենտ է և ունի
սեպական հիւանդանոց: Միւսը՝ մէծ նա-
ւաշինութեան նաւահանգստի (Վերֆ)՝
կառավարիչ է: Երրորդի մասին նա այս
օրերս կարգաց լրագիրներում, որ աջո-
ղութեամբ առաջ է գնում քաղաքային
վարչութեան մէջ: Չորրորդը մէծ տեղ

է բանում գրականութեան մէջ և նրա ա-
նունը յայտնի է ամբողջ գրագէտ Ուու-
սաստանին:

Կար ժամանակ, որ այդ մարդիկ վա-
զում գալիս էին այստեղ մաշւած, նիհար
գգգգւած, ազահութեամբ լափում էին
կոչտ տապակաները, շտապով ուտում
էին ոսպէ սուպը և կուլ էին տալիս ա-
հագին կոյտերով դարսւած հացը...

Ախ, նրանցից գոնէ մի քանիսը եթէ
երբեմն յիշէին Պարիզի աղքատ խոհանո-
ցը, նրա խեզը պահողին և վերադարձէին
նրան այն, ինչ որ այն ժամանակ ուտում
էին ապառիկ...

Բայց այժմս նրանց խորթ է 15 սահ-
աիմանոց սուպը և հազիւ թէ յիշէլիս լի-
նեն իրանց արդէն անպէտք Պօլիսա Լը-
վօլիսային:

Բայց Պօլիսա Լվօլիսան դեռ կանգնած
է ծխի գոլորշու մէջ, շիկացտծ պլիտայի
առաջ գարձնելով ամբողջ ժամանակ թշ-

շացող տապակաները թափաների մէջ, և
այժմ աւելի քիչ՝ քան երբ և իցէ՛ նա
յոյս ունի փոփոխութեան, հանգստութեան:

Պօլինա Լվովսան յիշում է շատ և շատ
եղելութիւններ:

Բայց նա աշխատում է չը մտածել մէջ՝
կի մասին, այն բարձր, շիկահեր, մեղմ
ձայնով և հեզ աչքերով անձի, որի պատ-
ճառով այն ժամանակ, շատ տարիներ
առաջ, նա ստիպւեց կանգնել ահա այս
խոհանոցում...

Այն ժամանակ նա ուսանողուհի էր:
Նա լսում էր լեզցիաներ համալսարանում,
յաճախում ֆրանսիայի միջնակարգ դըպ-
րոցը: Լսել է և Ռընանին, և Դարդին,
և Ռիրօյին: Այն ժամանակ նա ունէր
այնքան միջոց, որ կարող էր առանց նե-
ղութեան ապրել, բայց նրան անհրաժեշտ
էր աւելի փող ձեռք բերել, որպէսզի հնա-

բաւորութիւն ունենար երիտասարդ գե-
ղարուեստագէտի արհեստանոցի համար
մողէներ ձեռք բերել: Այդ էր պատճառը
որ նա ձգեց կուրսերը և ճաշարան բացեց:
Ինչպիսի հրապուրիչ երևակայութիւնն-
եր կային այն ժամանակ:

Ինչպէս քաղցրահնչիւն էին ինքնազն-
հութեան և ինքնամուացութեան խօսքերը
այն տարիներն իր համար...

Բայց բոլորն անցաւ ու հանգաւ այն-
պէս արագ:

Ճակատագիրը խլեց բոլորը Պոլինա
Լվովսայից՝ սիրելի մարդուն, որը գնաց
գուցէ և զեռ սէրը չը հանգած, և երկու
տարեկան լիդոչկային, որը մեռաւ բըկա-
ցաւից...

Բայց լիդոչկայի աչքերը նման էին նը-
րա աչքերին, նոյնպէս քաղցր, հեզ և
մոխրագոյն...

Բոլորից զրկւած է Պոլինա Լվովսան:
Մնացել են միայն տապակաների թըշ-

շողը, խոհանոցի մուխն ո մուրը, իր որ-
բռայրի քրոջ ընտանիքի պահպանութեան
անհրաժեշտութիւնը և կաղնեայ տախ-
տակի վրա կոտորիչի անդադրում թըխկ-
թիկոցը:

Անցան շատ տարիներ: Ահա նորից Պա-
րիզ եկաւ նաև այդ բարձրահասակ, մոխ-
րագոյն ու հեղ աշքերով գեղարուեստա-
գէտը:

Եւ ահա երբ նրա կինը իր 13 տարե-
կան աղջկայ հետ ճանապարհեց դէպի
Avenue de l'Opera-ի խանութները՝ կո-
շիկներ և ամառայ վերարկու գնելու,
մի անբացատրելի ոյժ մղեց նրան
դէպի այն փողոցը, դէպի այն ճաշտ-
ուունը...

Նատաշան առանց դժուարանալու ճա-
նաչեց նրան:

Նա փոխանակեց մի քանի վրդոված
խօսքերով, շփոթւած տուեց նրան ճաշ,
որ նա պատուիրել էր, ոսպէ սուպ և հոր-

թի տապակայ, ընդամենը 70 սանտիմի,
ինչպէս որ առաջ էր:
Նա բոլորը կերաւ :
Այդ բոլորը ուտելուց յետոյ, նա երկար
նստեց մի բաժակ թէյ առաջը դրած: Նա
կարծես սպասում էր ինչոր բանի,
Սպասում էր...

Բայց ոչինչ չը պատահեց:
Եւ ոչ ոք չեկաւ նրա մօտ...

Իսկ նատաշան արդէն ուշըի եկաւ, այլ
ևս առանձին ուշադրութիւն չէր դարձ-
նում նրա վրա և վարւում էր նրա հետ
այնպէս, ինչպէս ամեն մի յաճախորդի
հետ, որոնք գալիս են ամեն օր ուտելու:

Նա դուրս գնաց և այլ ևս չերևաց:

Երեկ նա գնաց Ռուսաստան: Նատա-
շան չասաց իր մօրաքրոջը, թէ նա եկել
էր, հին վէրքերը քրքրելուց ի՞նչ օգուտ...

Նատաշան չասաց մօրաքրոջը... Բայց
նա չէր նկատել, որ Պօլինա Լվովսան խո-
հանոցի լուսամուտի ծխապատ ապակուց

թերևս շատ բան էր նկատել...

Եւ այդպէս էլ պարզամիտ նատաշտն
չիմացաւ ծայրայեղ դէպքի պատճառը:
Եւ երբէք չիմացաւ նա, թէ ի՞նչ էր պատ-
ճառը, որ գեղարուեստագէտի երևալուց
երեք օր անցած՝ Պօլինա Լվովսային գլ-
տան խոհանոցում չը վառւած պլիտայի
քովը թունաւորւած ընկած:

...ոտի այս ուժը որ չէ ան-
դաւագի ուժը և իրան անշատու յան
անդար ոչ ուժի ուրաց ու մեջաւու ու
ուժ այս ու անդար այս այս նույն
դրամական անդար ու անդար ուրաց
ուրաց ու անդար ու անդար ուրաց ուրաց



1727

41

3301

3302

3303

3304

3305

2013

